также на стр. 82—85, в пункте б —«Решение проблемы универсалий. Номинализм». Изложение номиналистических воззрений Татеваци следует пункту а —«Формы и ступени познания». Нам кажется, что должно было быть наоборот, ибо номинализм является основой сенсуалистической гносеологии Татеваци, как об этом справедливо указывает и сам автор. Этой перестановкой пунктов а) и б) можно было избежать повторения многих вопросов, которые имеются в этих пунктах.

Иногда встречаются в работе неосторожные и поэтому неточные формулировки. Так, на стр. 59, излагая понимание Татеваци природы четырех элементов, автор пишет: «Когда элементы в силу закона притяжения и отталкивания перемешиваются, возникают различные тела» (подчеркнуто нами—Г. Г.). Ясно, что Татеваци не мог иметь представления о законе притяжения и отталкивания. На той же странице он пишет: «Природа, благодаря непрестанной борьбе между элементами, находится в непрерывном развитии, причем в своем развитии она постепенно поднимается от низших ступеней к высшим. Татеваци считает, что **мир развивается эволюционным путем»** (подчеркнуто нами—Г. Г.). Ошибка здесь очевидна, ибо Татеваци, защищая точку зрения сотворения мира богом, не мог быть сторонником эволюционного развития мира. Когда Татеваци пишет, что «природа не может творить внезапно, она постепенно поднимается от несовершенного к совершенному» (стр. 59), то он здесь имеет в виду не эволюционное развитие природы, мира в целом, а частные явления, как, скажем, развитие зародыша или семени.

Указанные нами эти отдельные недостатки книги отнюдь не снижают ее ценности и легко могут быть устранены при втором издании книги, которое весьма желательно, притом на армянском языке, ибо труд о выдающемся армянском мыслителе представляет большой интерес не только для всесоюзного, но и для армянского читателя.

Исследование С. Аревшатяна восполняет пробел, существующий в наших знаниях об одном из крупнейших мыслителей средневековой Армении, и дает довольно полное и всестороннее представление о его философских и социально-политических взглядах, с их прогрессивными и консервативными сторонами. Книга С. Аревшатяна—одна из тех необходимых монографических работ, без которых невозможно создание подлинно научной истории армянской философской мысли, и поэтому она является значительным вкладом в этой области.

Г. ГРИГОРЯН

ՀՈՎՀ. ԻՆՃԻԿՅԱՆ, *Բոգդան Կնունյանց*, Հայպետհրատ, Երևան, 1957, 307 էջ:

Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչ Բոգդան Կնունյանցը ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատների ավագ սերնդի այն ներկայացուցիչներից է, որոնք XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ պայքարում էին մարքսիստական-լենինյան պարտիա, նոր տիպի պարտիա ստեղծելու համար։ Բոգդան Կնունյանցը Անդրկովկասում և Ռուսաստանում անհաշտ ու հերոսական պայքար ծավալեց ցարական բռնակալության դեմ, իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրաբերեց պրոլետարիատի ազատագրության գործին և մեռավ բանտում ընդամենը 33 տարեկան հասակում։

Լինելով լենինյան-իսկրայական կազմակերպությունների և ՌՍԴԲՊ Կովկասյան Միության հիմնադիրներից մեկը Բաքվում և Անդրկովկասում, Կնունյանցը այդ կազմակերպություններն արժանավայել կերպով ներկայացրեց պարտիայի 2-րդ համագումարին, նա իրեն հատուկ նվիրվածությամբ ամենաակտիվ մասնակցություն ունեցավ 1905 թվականի ռևոլյուցիային, կատարելով պարտիայի կենտկոմի և Լենինի պատասխանատու հանձնարարությունները։ Հատկապես նշանակալից է նրա ծավալած գործունեությունը Պետերբուրգում։ Լինելով բանվորների դեպուտատների առաջին Սովետի Գործադիր կոմիտեի անդամ, նա ամեն ջանք գործ էր

գնում Սովետում բոլշևիկների քաղաքական գիծը կիրառելու համար։

Ո՛չ դատարան, ո՛չ բանար, ո՛չ աքսորը և ո՛չ էլ դաժան հալածանքները չկարողացան խորտակել նրա կամքը ցարիզմի և բուրժուազիայի դեմ մղվող պայքարում։

Բոգդան Կնունյանցը բռնության, ճնշման և շահագործման անհաղթ թշնամի էր, պրոլետարական դեմոկրատիայի և սոցիալիզմի գաղափարներին նվիրված անձնվեր մարտիկ և այդպիսին էլ մնաց մինչև իր կյանքի վերջը։

Այս պայծառ ռևոլյուցիոնների կյանքի և գործունեության մասին մինչև վերջերս չկար մի որևէ լուրջ ուսումնասիրություն։ Անհրաժեշտ էր կատարել բազմակողմանի և դիտական լուրջ ուսումնասիրություն, պրպտել բազմաթիվ արխիվային նյութեր (Մոսկվայի, Լենինգրադի, Բաքվի, Թբիլիսիի և Երևանի պետական ու պարտիական արխիվներում), որպեսզի հնարավոր լիներ ներկայացնել հայ ժողովրդի նշանավոր զավակի կյանքի, ռևոլյուցիոն, գրական-պրոպագանդիստական և հրապարակախոսական գործունեության ճշգրիտ պատկերը։

Այդ պատվավոր գործի ծանրությունն իր վրա վերցրեց պատմական գիտությունների թեկնածու Հովհաննես Ինճիկյանը, որի աշխատանքի արդյունքը այժմ հայ ընթերցող հասարակության սեփականությունն է դարձել։

Ցանկանում ենք հենց սկզբից նշել, որ համամիտ ենք Հ. Ինճիկյանի հետ, երբ նա գրում է. «Ջթաքցնելով Կնունյանցի՝ վերջին տարիների սխալներն ու տատանումները, մենք, սակայն, պարտավոր ենք նշել նրա մեծ ծառայությունները պարտիային և ռևոլյուցիային, որին նա նվիրվեց ամբողջությամբ, չխնայելով ոչ իր ուժերը, ոչ եռանդը և ոչ առողջությունը։ Այսօր ոչնչով չի կարելի արդարացնել որոշ շրջանում Կնունյանցի և նրա եռուն ռևոլյուցիոն գործունեության նկատմամբ եղած լռությունը։ Լիովին անարդարացի են այն հեղինակները, որոնք Բ. Կնունյանցի փառապանծ ռևոլյուցիոն գործունեության վրա փորձում են սևեր գցել միայն այն բանի համար, որ նա վերջին տարիները թույլ է տվել որոշ սխալներ ու տատանումներ» (էջ 290)։

Կարելի է վստահ կերպով պնդել, եթե չլիներ վաղաժամ մահը, ռեակցիայից հետո, ռևոլյուցիոն շարժման նոր վերելքի պայմաններում նա անկասկած կհաղթահարեր ժամանակավոր տատանումներն ու սխալները և նորից կկանգներ ռևոլյուցիայի ու սոցիալիզմի համար մարտնչող Լենինյան գվարդիայի առաջին շարքերում։ Պատահական չէ, որ Կնունյանցին որպես ընկերասեր և զինակցի լավ ճանաչող ու սիրող Ստ. Շահումյանը այնքան բարձր է գնահատել նրան՝ անվանելով «Փայլուն դեմք մեր պարտիայում»[1]։

Հ. Ինճիկյանը, ձեռքի տակ ունենալով բավական հարուստ փաստական նյութ, իր մենագրության մեջ Կոմունիստական պարտիայի ռևոլյուցիոն պայքարի պատմության լայն ֆոնի վրա փորձել է տալ Բ. Կնունյանցի բազմակողմանի գործունեության լրիվ պատկերը։

Աշխատության արժանիքներից պիտի համարել այն հանգամանքը, որ Բ. Կնունյանցի պրոպագանդիստական, գրական և հրապարակախոսական գործունեությունը դիտվում է նրա կնստարած պարտիական աշխատանքին զուգընթաց։ Եվ հենց դրա շնորհիվ հեղինակին հաջողվում է ստեղծել Կնունյանցի ամբողջական կերպարը։

Աշխատությունն սկսվում է Բ. Կնունյանցի մանկության, պատանեկության և ուսանողական տարիների մասին համառոտ ակնարկով։ Այն միջավայրը, որի մեջ մեծացել է Բոգդան Կնունյանցը, խորապես նպաստել է նրա ռևոլյուցիոն հայացքների կազմակերպմանը։ Կնունյանցների ընտանիքը մեր պարտիային տվել է չորս գործիչ, որոնցից ամեն մեկն իր դերն ունի ռևոլյուցիոն շարժման պատմության մեջ։

1896—1897 ուսումնական տարում, Բոգդան Կնունյանցը որպես Պետերբուրգի Տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող, մասնակցում է ուսանողական ռևոլյուցիոն խմբակների աշխատանքներին։ 1897 թ. մարտի 4-ին Կազանսկի հրապարակում ուսանողները կազմակերպում են բողոքի ցույց, որտեղ Բ. Կնունյանցը ստանում է իր մարտական մկրտությունը։ Այստեղ նա ձերբակալվում է ոստիկանության կողմից։ Հ. Ինճիկյանը բազմաթիվ հետաքրքրական էջեր է նվիրում ուսանողության ռևոլյուցիոն շարժման նկարագրությանը, ցույց է տալիս, թե ինչպես Կնունյանցը հիմնականում ընթանում էր ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի դրոշի ներքո և թե ինչպես նա դառնում է ուսանողական ռևոլյուցիոն շարժման աչքի ընկնող ղեկավար գործիչներից մեկը։ 1899 թ. Կնունյանցը հեռացվում է ինստիտուտից։ Մեկ տարի ընդմիջումից հետո նրան հաջողվում է վերականգնել իր իրավունքները և շուտով դառնում է Պետերբուրգի ուսանողական ռևոլյուցիոն կազմակերպության բյուրոյի անդամ, իսկ ամռանը՝ Պետերբուրգի ռևոլյուցիոն երիտասարդության կողմից ուղարկվում է Բեռլին մասնակցելու Վիլհելմ Լիբկնեխտի թաղմանը։

---

[1] Ստ. Շահումյան. Հոդվածներ և ճառեր. Հայպետհրատ, 1953, էջ 141։

1901 թ. Ռուսաստանում ծավալված մասսայական ռևոլյուցիոն պայքարի ազդեցության տակ նորից մեծ թափ ստացան ուսանողական շարժումները։ Պետերբուրգը ռևոլյուցիոն ուսանողության լավագույն կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը՝ Բ. Կնունյանցը նորից ձերբակալվեց, հեռացվեց ինստիտուտից և աքսորվեց մայրաքաղաքից։

Հայ ականավոր ռևոլյուցիոների կյանքին նվիրված գրքի բազմաթիվ էջերում հեղինակը ցույց է տալիս այն խոշոր դերը, որը կատարել է Բոգդան Կնունյանցը Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ։ Կնունյանցն իր բախտը Բաքվի բանվորական շարժման հետ կապել էր դեռևս 1898 թ.։ Յուրաքանչյուր անգամ գալով Բաքու, իսկ ինստիտուտից հեռացվելուց հետո, երկար ժամանակ ապրելով Բաքվում, նա 1901 թ. գարնանը ամենաակտիվ մասնակցություն ունեցավ ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի ձևավորման աշխատանքներին և հենց սկզբից մտավ նրա կազմի մեջ։ Բ. Կնունյանցը, որպես Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարներից մեկը, ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել ընդհատակյա տպարաններ ստեղծելու գործում, որոնք այնքան խոշոր դեր են կատարել այդ տարիներին մեր պարտիայի պատմության մեջ։

Բ. Կնունյանցի գործունեությունը չէր սահմանափակվում միայն Բաքվով։ Նա պարտիական հանձնարարություններով հաճախակի լինում էր Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Նուշիում և այլ վայրերում։ Հեղինակը ցույց է տալիս, որ Կնունյանցը սերտորեն կապված էր հայկական շրջանների հետ և շատ բան էր անում հայ աշխատավորության մեջ ռևոլյուցիոն գաղափարներ տարածելու համար։ Այդ կապակցությամբ նշանակալից է նրա ակտիվ մասնակցությունը 1902 թ. ամռանը կազմակերպված «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» և նրա տպագիր օրգան «Պրոլետարիատ»-ի ստեղծման գործին։

Այն կապերը, որ ստեղծվել էին Բաքվի, Թիֆլիսի և Կովկասի մյուս քաղաքների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միջև՝ պարտիայի 2-րդ համագումարը նախապատրաստելու կապակցությամբ, արագացնում էին Կովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միավորման գործը։ 1903 թ. մարտին Թիֆլիսում տեղի է ունենում Անդրկովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարը, որը լիովին կանգնեց «Իսկրայի» գծի վրա և խոշոր չափով նպաստեց Կովկասյան բոլոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետագա գործունեությանը։ Համագումարը միավորեց սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, ընտրեց ՌՍԴԲՊ Կովկասյան միացյալ կոմիտե, ստեղծեց իր տպագիր օրգանը և, վերջապես, ընտրեց ՌՍԴԲՊ երկրորդ համագումարի պատգամավորներ։ Բաքվի կազմակերպությունից Կովկասյան միացյալ կոմիտեի մեջ մտավ Բոգդան Կնունյանցը։ Նա ընտրվեց նաև պարտիայի երկրորդ համագումարի պատգամավոր։

Հ. Ինճիկյանի աշխատության ամենաուշագրավ մասը ՌՍԴԲՊ երկրորդ համագումարին նվիրված գլուխն է, որը գրելու համար նա խոշոր հետազոտական աշխատանք է կատարել։ Հեղինակը ոչ միայն հանգամանորեն ուսումնասիրել է Վ. Ի. Լենինի աշխատությունները, այլև ծանոթացել է համագումարի մասնակիցների բազմաթիվ հիշողություններին, օգտագործել է մի շարք չհրատարակված արխիվային նյութեր։

Պարտիայի 2-րդ համագումարում իսկրայական ուղղության հաղթանակի համար Վ. Ի. Լենինի մղած սկզբունքային համառ պայքարի ակտիվ կողմնակիցների թվումն էր նաև Ռուսով-Կնունյանցը։ Համագումարում ծավալված սուր պայքարի վերլուծման միջոցով Հ. Ինճիկյանը կարողացել է հստակորեն բնորոշել նաև Կնունյանցի դիրքը։ Համագումարում ունեցած իր բազմաթիվ ելույթներում ու առաջարկած բանաձևերում Կնունյանցը հանդես է եկել որպես Վ. Ի. Լենինի մարտական գինակից և մինչև վերջը պաշտպանել է նոր տիպի պարտիա ստեղծելու լենինյան գիծը։

Համագումարում Բ. Կնունյանցի ունեցած ելույթներից մեկի մասին Վ. Ի. Լենինը հետագայում գրել է. «Մենք խորհուրդ կտայինք բոլորին, ովքեր ուզում են ինքնուրույնորեն վերլուծել պարտիական պառակտման պատճառները և գտնել նրա առմատները համագումարում, կարդալ և վերստին կարդալ ընկ. Ռուսովի ճառը, որի փաստարկումները փորձամանությունը ոչ միայն չհերքեց, այլև նույնիսկ չվիճարկեց։ Ասենք՝ չի էլ կարելի վիճարկել այնպիսի տարրական, այբբենական ճշմարտություններ, որոնց մոռացումն արդեն ինքն ընկ. Ռուսովը արդարացի կերպով բացատրում էր միայն «ներվային զգիտով»[1]։

Պարտիայի համագումարից հետո Բ. Կնունյանցը որոշ ժամանակ ապրում էր Ժենևում և աշխատակցում «Իսկրա»-ին։ Միաժամանակ նա կապ հաստատեց Ժենևի ռևոլյուցիոն հայ ուսանող երիտասարդության հետ և նրանցից կազմակերպեց սոցիալ-դեմոկրատական խմբակ։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 399—400։

Պայքարելով երիտասարդության վրա դաշնակցության ունեցած ազդեցության դեմ, Կնունյանցը կազմակերպչորեն ձևավորեց այդ խմբակը և նրանց մոտ հանդես եկավ մի շարք զեկուցումներով, մասնավորապես՝ ՌՍԴԲՊ երկրորդ համագումարը և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիայի հերթական խնդիրները թեմայով։

Աշխատության մեջ Հ. Ինճիկյանը մանրամասն պատմում է Բոգդան Կնունյանցի՝ «Իսկրային» աշխատակցելու մասին։ Ժնևում եղած ժամանակ, Վորովսկու հետ միասին, Կնունյանցը մասնակցում էր համագումարից հետո նոր խմբագրական կազմով լույս տեսած «Իսկրայի» վեց համարների (46—51) հրատարակությանը։ Այդ շրջանին են վերաբերում Կնունյանցի այն նշանավոր հոդվածները, որոնք լույս են տեսել «Կավկազեց» ստորագրությամբ։

«Իսկրայի» № 49-ում լույս տեսած «Նոր թալան» հոդվածում Կնունյանցը մանրամասն կանգ է առնում ցարական կառավարության 1903 թ. հունիսի 12-ի որոշման վրա՝ հայ եկեղեցական կալվածքները բռնագրավելու մասին։

Բոգդան Կնունյանցը նշում է, որ կառավարությունը այդ օրենքը հրատարակեց ռևոլյուցիոն շարժման վերելքի պայմաններում, նպատակ ունենալով ջլատել ռևոլյուցիայի ուժերը, բայց ստացվեց հակառակը, ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան օգտագործեց ժողովրդի դժգոհությունը և այն ուղղեց ցարիզմի դեմ։

«Նոր թալան» հոդվածի առթիվ լենինյան «Իսկրան» գոհունակությամբ նշեց, որ հոդվածագիրը ճիշտ է բնորոշում ցարիզմի ազգային բաղաքականությունը և ճիշտ է բմբռնում հայ բանվորների և աշխատավորության դասակարգային խնդիրները՝ ավյալ իրադարձությունների կապակցությամբ։

1903 թ. դեկտեմբերին վերադառնալով Ռուսաստան, Բ. Կնունյանցը լիովին նվիրվում է պարտիական աշխատանքին։ Կատարելով Վ. Ի. Լենինի հանձնարարությունը, նա լինում է Ռուսաստանի հարավում, Կովկասում և ամենուրեք ելույթներ է ունենում պարտիայի 2-րդ համագումարի արդյունքների մասին, մերկացնում է մենշևիկներին, նրանց պառակտողական, վնասակար բաղաքականությունը և խնդիր է դնում նախապատրաստել ու հրավիրել պարտիայի նոր, 3-րդ համագումար։

1904 թ. հունվարին Բ. Կնունյանցը Մոսկվայում էր, որտեղ զեկավար աշխատանք էր տանում որպես Մոսկվայի կոմիտեի անդամ։ Բայց փետրվարին նա ձերբակալվեց և 14-ամսյա բանտարկությունից հետո կանգնեց դատարանի առաջ։ Հաշվի առնելով Երկրում տիրող ռևոլյուցիոն իրադրությունը և կատարելով պարտիայի հանձնարարությունը, Կնունյանցը դատարանում ունեցած իր ելույթում մերկացրեց միապետական կարգերը և ագիտացիոն նպատակներով՝ շարադրեց սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքները։

Չնայած դատավարությունը գոնփակ էր, այնուամենայնիվ Կնունյանցի ճառը «Դատ դատի դեմ» խորագրով տպագրվեց և դուրս եկավ դատարանի չորս պատերից ու հնչեց ամբողջ երկրով մեկ։

Պարտիայի Կենտկոմին հաջողվում է Բ. Կնունյանցին դատավարությունից հետո շուտով հանել բանտից։ Նա անցնում է արտասահման, որտեղ այդ ժամանակ հրավիրված էր պարտիայի 3-րդ համագումարը։ Չնայած առկա մի շարք կոդմնակի տեղեկություններին, Հ. Ինճիկյանին, դժբախտաբար չի հաջողվել մինչև վերջ պարզել, թե արդյոք Կնունյանցը մասնակցել է 3-րդ համագումարի աշխատանքներին և ընտրվե՞լ է Կենտկոմի անդամ, թե ոչ։ Արտասահմանում Բ. Կնունյանցը երկար չմնաց։ 1905 թ. ամռանը նա արդեն Կովկասում էր, ապա Կենտկոմի հանձնարարությամբ լինում է Ռուսաստանի մի շարք քաղաքներում և մեկնում է Պետերբուրգ պարտիական աշխատանքի։

1905 թ. ռևոլյուցիայի տարիներին Բ. Կնունյանցը ծավալել է փայլուն հրապարակախոսական-գրական գործունեություն։ Հ. Ինճիկյանը իր աշխատության մեջ մանրամասն վերլուծության է ենթարկում Կնունյանցի՝ Բոգդան-Ռադին ծածկանվամբ առանձին գրքույկներով տպագրված «Քաղաքական պարտիաները և պետական կառուցվածքի ձևերը», «Ընտրական ինչպիսի՞ իրավունք է պետք բանվոր դասակարգին», «Ֆրանսիայի պետական կազմը», «Բանվորների դեպուտատների առաջին Սովետը», «Դատ՝ դատի դեմ» և այլ աշխատությունները։

«Պայքար բոլշևիկյան գծի համար Պետերբուրգի բանվորների դեպուտատների Սովետում» ուշագրավ գլխում Հ. Ինճիկյանը բնորոշում է Բ. Կնունյանցի գործունեության պետերբուրգյան շրջանը իբրև նրա ռևոլյուցիոն գործունեության ամենացայտուն, բովանդակալից ժամանակաշրջան։ Դա ընդգրկում է 1905 թ. աշունը և ձմռան սկիզբը, երբ ռուսական առաջին ռևոլյուցիան ապրում էր իր զարգացման բարձրագույն փուլը։

Մինչև այժմ սովետական պատմագրությունը չի տվել լուրջ ուսումնասիրություն Պետերբուրգի բանվորների դեպուտատների Սովետի գործունեության մասին։ Այդ Սովետը, հայտարարված լինելով զուտ մենշևիկյան, դուրս է մնացել մեր պատմագիրների տեսադաշտից։ Հ. Ինճիկյանը միանգամայն ճիշտ է վարվել Պետերբուրգի բանվորների դեպուտատների Սովետի պատմությունն ուսումնասիրելով։ Բազմաթիվ

աղբյուրների հետ միասին, որպես սկզբնաղբյուր նա օգտագործել է նաև այդ Սովետի եռանդուն գործիչ Բոգդան Կնունյանցի «Բանվորների դեպուտատների առաջին Սովետը» գրքույկը։

Բ. Կնունյանցը Պետերբուրգ եկավ 1905 թ. օգոստոսի վերջին և ընտրվեց Պետերբուրգի կոմիտեի կազմի մեջ։ Մեզ համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում մեր պարտիայի տակտիկական գծի կիրառումը Պետերբուրգի բանվորների դեպուտատների Սովետում, որտեղ բոլշևիկները փոքրամասնություն էին կազմում և որտեղ նրանք ստիպված էին մենշևիկների դեմ լարված պայքար մղել։ Այդ պայքարում Լենինը հենվում էր բոլշևիկ դեպուտատների, գլխավորապես Բ. Կնունյանցի, որպես Սովետի գործադիր կոմիտեում բոլշևիկների Պետերբուրգի կոմիտեի ներկայացուցչի վրա։

Հ. Ինճիկյանը ճշմարտացի է, գտնելով, որ Պետերբուրգի Սովետն իր հեղինակությամբ և աշխատանքի թափով պարտական էր բոլշևիկներին, որոնք հաճախակի խորտակելով մենշևիկյան ղեկավարության դիմադրությունը և հենվելով ժողովրդական մասսաների վրա, կենսագործում էին իրենց ռևոլյուցիոն միջոցառումները։ Այս հանգամանքն անպայման պետք է հաշվի առնել Պետերբուրգի Սովետի ընդհանուր գնահատականը տալու ժամանակ։ Այդ Սովետի պատմությունը հնարավոր չէ ստեղծել առանց հաշվի առնելու նրա բոլշևիկ գործիչների, հատկապես նրա ղեկավար գործիչներից մեկի՝ Բ. Կնունյանցի կարծիքը Սովետի գործունեության մասին։

1905 թ. դեկտեմբերի 3-ին ձերբակալվեց Պետերբուրգի բանվորների դեպուտատների առաջին Սովետը։ Գործի քննությունը տևեց հինգ ամիս։ Դատավարությունը նշանակված էր 1906 թ. հունիսի 20-ին, բայց Պետերբուրգի պրոլետարիատի բողոքի ցույցը վախեցրեց կառավարությանը։ Միայն սեպտեմբերի 19-ին վերսկսվեց դատավարությունը։ Դատավարության ժամանակ մենշևիկները իրենց վախկոտ էին պահում։ Նրանք ցարական դատարանում հրաժարվում էին ռևոլյուցիոն տակտիկայի սկզբունքներից։ Իսկ Բ. Կնունյանցի և մյուս բոլշևիկների ելույթներն ուղղված էին գոյություն ունեցող կարգերի դեմ։ Այսպես, սեպտեմբերի 28-ի հակիրճ, բայց կրակոտ ճառում Բ. Կնունյանցը հայտարարեց, թե բոլշևիկների պարտիան զինված ապստամբությամբ ցարիզմը տապալելու և սոցիալիստական հասարակարգ հաստատելու ճանապարհին պայքարի գլխավոր միջոց է համարում պրոլետարիատի մասսայական շարժումը։

1906 թ. նոյեմբերին, դատարանը մեղադրյալների բացակայությամբ (նրանք հրաժարվել էին դատավարությանը մասնակցելուց) հրապարակեց դատավճիռը, որի համաձայն Բոգդան Կնունյանցը մի խումբ դեպուտատների հետ դատապարտվեց ցմահ աքսորի։ Չնայած դատարանի վճռին, մինչև 1907 թ. փետրվարը Կնունյանցին շարունակում էին պահել բանտում։ Աքսորի մասին նա պատմում է իր «Երեք ամիս աքսորում և փախուստ» հոդվածում։

1907 թ., երբ Կնունյանցը գտնվում էր Բեռլինում, ընտրվում է 2-րդ Ինտերնացիոնալի Շտուտգարդտի կոնգրեսի պատգամավոր։ Ապա նա մասնակցում է ՌՍԴԲՊ չորրորդ կոնֆերանսի աշխատանքներին, որից հետո Պետերբուրգի վրայով գալիս է Բաքու։ Այստեղ, Բաքվում վատառողջ Կնունյանցը հեռացավ պարտիական ընդհատակից, միշտ մնալով որպես իսկական ռևոլյուցիոներ, ցարիզմի և բուրժուազիայի անհաշտ թշնամի։ Նա շարունակում էր իր քաղաքական գործունեությունը՝ աշխատակցելով բոլշևիկյան մամուլին և լեգալ բանվորական կազմակերպություններին։ Այդ ժամանակ Բ. Կնունյանցը գրում է մի շարք սուր, սպանիչ հոդվածներ դաշնակցության դեմ։

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ Բաքու վերադառնալուց հետո, 1908—1910 թթ. ռեակցիայի շրջանում, Բ. Կնունյանցը թույլ է տվել առանձին սխալներ և տատանումներ պարտիայի տակտիկական գծի գնահատման հարցերում։ Այդ տատանումները, ինչպես նշում է դրախոսվող գրքի հեղինակը, արտահայտվել են, մասնավորապես, բոլշևիկյան թերթերի հետ նաև մենշևիկյան մամուլին աշխատակցելու փաստով։ Այս շրջանի հոդվածներում, պարտիայի տակտիկայի և ստրատեգիայի մի շարք հարցերի պարզ ըմբռնումը զուգակցվում է լիկվիդատորական բնույթի որոշ տատանումներով և սխալներով։

Սակայն Բ. Կնունյանցի վերջին հոդվածներում հակասական դրույթների և սխալների առկայությունը չպետք է ազդի իր ամբողջ երիտասարդ կյանքը Կոմունիստական պարտիայի, սոցիալիստական ռևոլյուցիայի գործին անվերապահ նվիրաբերած պրոֆեսիոնալ ռևոլյուցիոների գործունեության ընդհանուր գնահատականի վրա։

1910 թ. սեպտեմբերի 29-ին Բ. Կնունյանցը մատնությամբ ձերբակալվեց։ Մինչև գործի քննությունը, առանց այդ էլ խիստ քայքայված առողջությամբ՝ նա վարակվեց որովայնի տիֆով և 1911 թ. մայիսի 14-ին վախճանվեց բանտի հիվանդանոցում սրտի կաթվածից։

Ստ. Շահումյանը, Վ. Ի. Լենինի խմբագրությամբ լույս տեսնող, «Ռաբոչայա գազետա» թերթում գրեց մի հուզիչ մահախոսական Բ.

Կնունյանցի մասին. «Նա դեռ 20 տարեկան էլ չկար,—գրում է Շահումյանը,— երբ հարեց մեր պարտիային և այդ ժամանակվանից էլ նրա ամենահավատարիմ ու ամենաազնիվ անդամներից մեկն էր։ Նա չէր ապրում, այլ վառվում էր իր գեղեցիկ կյանքի այդ տասը տարիների ընթացքում. որը նա ամբողջությամբ, առանց մնացորդի նվիրեց սոցիալիզմի և դեմոկրատիայի համար մղվող պայքարին»[1]։

Կարդալով Հ. Ինճիկյանի ուշագրավ աշխատությունը, ցանկանում ես հեղինակին ասել ջերմ խոսքեր նրա բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար։ Իհարկե, կարելի է անել նաև մի շարք դիտողություններ և ամենից առաջ այն, որ Կնունյանցի մասին գրված այս իսկապես առաջին լուրջ և ամփոփ աշխատանքում. այնուհանդերձ, կարելի էր վերաբերմունք ցույց տալ Կնունյանցի մասին գրված բոլոր այն հոդվածների, հիշողությունների և բրոշյուրների նկատմամբ, որոնք նախորդել են այս մենագրությանը։ Աշխատությունը թեպետ կարդացվում է մեծ հետաքրքրությամբ, բայց զերծ չէ ոճական և լեզվական անհարթություններից։

Վերջում կցանկանայինք ասել, որ վատ չէր լինի, եթե հետագայում ի մի բերվեին և առանձին գրքով հրատարակվեին Բոգդան Կնունյանցի աշխատություններն ու հոդվածները, որոնք ոչ միայն կօգնեն մեր պարտիայի պատմության ուսումնասիրության գործին, այլև կունենան խոշոր դաստիարակչական նշանակություն մեր երիտասարդության համար։ Հայպետհրատը անպայման պետք է մտահոգվի Հ. Ինճիկյանի աշխատությունը նաև ռուսերեն հրատարակելու խնդրով։

Վ. ՔԱՂԱՇՅԱՆ

[1] Ստ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, Հայպետհրատ, 1953, էջ 141։